№ 42 ՅՈՒՆԻՍԻ 13 (25) 1877 ՅՈՒՆԻՍԻ 13 (25) № 42

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 7 ռուբ. կես տարվանը 4 ռուբ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատունը, պ. Յատուրեանի և Արտախանեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшака"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 (Բացի կիրակի և մեծ օրերից).

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր լրագրութիւնը ինչ նշանակութիւն ունի։—Ներքին տեսութիւն։ Պատերազմական բեմից։ Անդրկովկասեան ուսուցչական դպրանոցը։ «Кавказъ» լրագիրը և մեր դատաւորները։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Թուրքիա։ Անգլիա։ Արտաքին լուրեր։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Նամակներ իմ բարեկամին։

ՄԵՐ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԻՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ

Վ. բաց «Դրօշէբա» լրագիրը սկրսեց ամեն օր հրատարակվել, աւելի փոքր դիրքով։ Ցանկանում ենք ազողութիւն մեր եղբայրակցին և շնորհաւորում ենք նրան։

Միայն պէտք է խոստովանենք որ ինքներս չենք անի այդ տեսակ բան։

Եթէ հնարաւոր լիներ հրատարակել հայոց կամ վրաց լրագիր ամեն օր այն դիրքով, որով հրատարակվում է «Մշակը» կամ հրատարակվում էր ինքն «Դրօշէբա», երբ շաբաթը մի անգամ էր երևում,—դա անկասկած մեծ օգուտ կը բերէր։ Բայց դորա համար ոչ հայոց, ոչ վրաց խմբագրութիւնները չունեն բաւական ոյժ և բաւական նիւթական միջոց։

Իսկ ցանկանալ հայոց լրագրի ամեն օր երևալը, «Դրօէբայի» դիրքով, ինչպէս որ այդ ցանկանում է «Тифл. Вѣстн.» լրագիրը, նախատելով մեզ մինչև անգամ որ մենք բաւական եռանդ չունենք,—այդ տեսակ ցանկութիւն մենք բոլորովին նախանձելի չենք համարում։

Մէկ բան չը պէտք է մոռանանք, այն է որ թէ հայերս և թէ վրացիներս չունենք դեռ բաւական զարգացած կենդանի գրականութիւն, այնպէս որ մեր լրագիրները իսկապէս պէտք է կատարեն մեր ժողովրդի մէջ այն բոլոր պաշտօնները, որ Եւրոպայում կամ Ռուսաստանում կատարում են՝ նոր երևած գրքերը, ուսումնական աշխատութիւնները, հատ ամսագիրները, օրական հարցերի վրա գրվող փոքրիկ բրոշիւրները, բոմանները և վերջապէս օրական և շաբաթական լրագիրները։

Մեր տեղական լեզուով տպվող լրագիրը չէ կարող մեծ դիրքով շուտ շուտ երևալ, որովհետև ոչ այնքան շատ հասարակական հարցեր կան մեզանում, որքան Եւրոպայում, ոչ էլ այն ոյժը, այն աշխատող ձեռքերի քանակութիւնը, ոչ էլ այն դրամական միջոցներն ունենք....

Մեր լրագիրը պէտք է պարունակէ իր մէջ, բացի ներքին և արտաքին (քաղաքական) ընթացող լուրերից (որ մեր կարծիքով երկրորդական բան է մեզ համար), գլխաւորապէս այնպիսի յօդուածներ՝ թէ առաջնորդող, թէ ներքին խնդիրների վրա, և թէ վերջապէս բանասիրական բաժնում, որոնք ստիպէին ընթերցողին փոքր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԻՄ ԲԱՐԵԿԱՄԻՆ

—

IV *)

Անգին բարեկամ,

Ես թողեցի Թիֆլիս քաղաքի հայ հասարակութեան կրթուած, լուսաւորված դասը, որ իր օտարօտի վարմունքներով իրաւ մի անաչառ դատաւորի կողմից զզուանքից աւելի ուրիշ ոչինչ բանի արժանի չէ։ Ես դուրս եկայ այստեղի հայ հասարակութեան բարձր (?!) շրջաններից, որոնք իրանց կեանքի խառը, անկարգ, հակահասարակական երևոյթներով հահոյանքից աւելի ուրիշ ոչինչ գովասանքի արժանի չեն։ Ես բողոքելով հեռացայ մարդկային սրբազան պարտաւորութիւններ չը կատարող, ինքը իրան չը ճանաչող հասարակութենից և հիմայ ուզում եմ մտնել այստեղի միջին դասը։—Մտայ...

Ի՞նչ բան է այս միջին դասը։ Ո՞վքեր են կազմում քաղաքիս հայ հասարակութեան այդ մասը։ Ի՞նչ զանազանութիւն կայ սորա և այն բարձր անուանած դասի մէջ։ Ժողովրդի ո՞ր տարրերից են բաղկացած այս երկուսն էլ։ Ի՞նչ որոշող յատկութիւններ կան սոցա մէջ։ Մէկը միւսից ինչով է զանազանվում։

Անկարելի է, սիրելի ընկեր, պատասխանել այս հարցերին.—որովհետև իսկապէս բարձր և միջին դասեր չը կան այստեղ, որովհետև մէկը միւսից աւելի կամ պակաս առանձնաշնորհութիւն չունի, որովհետև, եթէ կարելի է այսպէս ասել, դասական որոշող յատկութիւններ, ընդունակութիւններ չեն բաժանում առաջինին երկրորդից և հակառակ՝ երկրորդին առաջինից։ Բնութեան և օրէնքի առջև, մի ասա, ամենքն էլ հաւասար են եղել... Երկուսն էլ հայոց ազգի ազօրինի, ապերախտ զաւակներ են։ Թիֆլիսի հայ հասարակութեան բարձր ու միջին դասերը գոյութիւն չունենալով, առիթ է ներկայանում ինձ խառնել դրանց միմեանց հետ և անուանել հարստահարող, փող պաշտող, վատ բուրժուա։ Այս անպիտան բուրժուա դասը, որ իրաւ մի հասարակութեան մէջ դաս կարող է կազմել, առաջ է եկել զանազան ժողովրդների անբաղդրելի տարրերից և, ժամանակի հետ անընական կերպով զարգանալով, գոյացրել է իրանից ինքն էլ չը գիտէ, թէ ինչ հասարակութիւն։ Դարձեալ հասարակական խաւն է որ գերազանցում է։ Հիմայ արի դու և այս ինքն իրան չը ճանաչող, խառը հասարակութեան մէջ դասեր որոշիր։ Իմ մեղը չէ, եթէ ես հետևելով ուրիշ երկիրներին, այստեղի հասարակութեան մէջ էլ ցանկացայ երեք դաս գտնել՝ բարձր կամ կրթուած, միջին և ցածր։ Այդպէս չէ եղել։ Այստեղ իսկապէս երկու դաս կայ՝ հարուստ և աղքատ։ Ով որ հարուստ է—խելօք է (sic) և հարստահարում է։ Իսկ ով որ աղքատ է—յիմար է և ճնշվում է։ Վատ բուրժուա և խեղճ պրօլէտէր, ահա բոլորը։

Ես ոչինչ զանազանութիւն չեմ գտնում այստեղի մի հայ ուսում առած, համալսարանական երիտասարդի և մի հաստափոր հայ վաճառականի մէջ։ Առաջինը իբր թէ ներկայացնում է հասարակութեան բարձր, կրթուած դասը, իսկ երկրորդը—միջին։ Երկուսն էլ հաւասար կերպով, կարծես իրարու խօսք տուած, իրանց կարողութեան չափ հարստահարում են խեղճ ժողովրդին և վերջապէս ում որ կարող են։ Երկուսի մարդկային զգացմունքներն էլ կամայ ակամայ նմանում են միմեանց։ Երկուսի հասարակական յարաբերութիւններն էլ մշտական ու բարեկամական լինելով, մօտեցնում են սրանց իրարու հետ և, եթէ կարելի է ասել, մի մարմին և մի հոգի են դարձնում։ Եկէք և զանազանութիւն գտէք սրանց մէջ։—Սորանից յետոյ չատ հեշտ է եզրակացնել, թէ ինչպիսի ազդեցութեան տակն են գտնուել այդ երկուսի ընտանիքները և թէ այդ բարերար ազդեցութիւնը ինչ կրթողական նշանակութիւն է ունեցել այստեղի հայ հասարակութեան համար։

Կուզես, բարեկամ, ապացոյց։ Արի ուրեմն մտնենք այդ երկու էակների ընտանիքը և տեսնենք այն ինչ որ ասում եմ։—Ահա մի չքեղ կահ կարասիքով զարդարած դահլիճ։ Աթոռների վրա բազմած են բարձր, կրթուած անուանած դասի ներկայացուցիչ — երիտասարդի հաստ մայրը, խարդախ պատկեր ունեցող հայրը, կոարտուող ու միշտ նազանող քոյրը, բնական ճանապարհով դաստիարակող փոքրիկ եղբայրը, գուցէ և հազար հազար «թումաններ» բերող սիրուն կինը և այլն։ Ահա ինքը երիտասարդ պարոնն էլ իր խելօք ընկերներով։ Ի՞նչ են անում։—Ոչինչ, եթէ գործ չունեն, թուղթ են խաղում։ Խօսում են իրարու հետ օտար լեզուներով։ Խօսակցութեան մեծ մասը ծաղրական բաների վրա է։ Ծիծաղում են հայոց գրականութեան և լեզուի վրա, եթէ միայն գիտեն թէ հայերը լեզու և գրականութիւն ունեն։ Անտարբերութեան թունաւոր քամին պըտուտ գալով դրանց գլխում չատ անգամ պատճառ է լինում արհամարհանքի դէպի ամեն բան, ինչ որ հայ ազգին է վերաբերում։ Քիչ է մնում որ անիծեն իրանց հայ ծնուած լինելը։—Բայց էգուց երեկոյեան կը հաղնեն թանկագին զգեստներ, կերթան «կլուբ» (ափսոս անուն որ Թիֆլիսցիները իրանց քէֆ անելու և թուղթ խաղալու տեղերին են տուել), կը պար գան, թուրքի ասած երգերը կը լսեն, եւրօպական երաժշտութեանը ականջ կը դնեն, կուտեն, կը խմեն և յոգնած, դաղրած, իրանց պարտաւորութիւնները կատարած, կը վերադառնան տուն և այլն և այլն։ Այսպէս շարունակ մինչև կեանքի վերջը։ Եւ բարձր լուսաւորված դասի ներկայացուցիչ, համալսարանական (!) երիտասարդը իր հեղինակութեամբ նպաստում է այդպիսի դատարկապորտ կեանքին։

Մի և նոյն բանը աւելի կամ պակաս չքեղութեամբ կատարվում է հաստափոր վաճառականի տանը։ Կրկնում եմ, արի և զանազանութիւն գտիր սրանց մէջ։ Ի՞նչ եմ ասում, գուցէ այն կըրթուած պարոնը հայ վաճառականի որդին է։ Շատ կարելի է։ Բայց եթէ իսկական որդի էլ չեղաւ, այնու ամենայնիւ հաստափորի օրինաւոր զաւակն է։

Եթէ յիշում ես, սիրելի, ես մի անգամ բողոքեցի երեսուն տարուայ մեր համալսարանական երիտասարդութեան դէմ և հիմա էլ կրկնում եմ, որ նա մինչև այսօր ոչինչ չէ արել մեր հասարակական կրթութեան վերաբերութեամբ, չէ պատրաստել հասարակական հող, որի վրա կարողանային աճել կեանքի ծառերը։ Իսկ ինչ որ արել է, բոլորն էլ արտաքին է եղել, ձեի համար է արել։ Եւ ահա այժմ ասես նա ձեռք է տուել գաղթական, թափառական հաստափոր հայ վաճառականին ու դորա նման էակներին և ապրում է միայն ապրելու համար... Բացառութիւններ միշտ եղել են և կը լինեն, բայց մի վարդը գարուն երբէք չէ բերում...

Քաղաքիս հայ հասարակութեան ցածր, աղքատ դասի մասին ինչ ասեմ, բարեկամ։ Ամեն երկրում այս խեղճ դասը միշտ ճնշուած պատկեր է ներկայացնում և նոյն պայմանի մէջ է։ Սա է որ հարստահարվում է վերոյիշեալներից, բայց դարձեալ այնքան ոյժ և ոգի ունի, որ դիմանալով նրանց անզթութեանը, կարողանում է գտնել իր օրական ապրուստը և երբ անտանելի է լինում լուծը սկսում է աշկարայ, օրը ցերեկով բողոքել անիրաւութիւնների դէմ։—Շատ ժամանակ չէ որ այստեղի մի խեղճ մշակ մարդ ատրճանակով ուզեց պաշտպանել իրան հարստահարողի չափից դուրս ճնշման դէմ... Ասում էին որ այս մի վեհանձնութիւն է։

Այստեղի աղքատ դասի ներկայացուցիչները կարող են հանդիսանալ մանաւանդ մէջքն ու կողերը բեռներով մաշված խեղճ համալները։ Ողորմելի հայ մարդիկը մեր ազգային գաղթական ու թափառական աւանդութեանը հաւատարիմ մնալով ահա Թիֆլիս քաղաքում բեռնակիր անասունների պաշտօնն են կատարում։ Եւ սոքա իրանց աշխատանքի համեմատ վարձատրութիւն են ստանում վերոյիշեալ հարուստ պարոններից,—ինչպէս չէ։ Խեղճ հարստահարուած մարդիկ։

Ահա, ընկեր, այդ ճնշուած մշակների մի խումբ ահագին, ծանր «փալաններով» գլխաւորված։ Էս օրի ժամանակ, երբ քաղաքիս լաւ հասարակութիւնը զբաղուած է պատուական ճաշ ուտելով իր տանը, իսկ երբ դուրսը արևը սաստիկ տաքացնում է, մեծ փողոցի մէջ մի տան պատի ստուերում հաւաքուել են այդ չարչարող էակները և աշխատանքից յետոյ հանգստանում են սառը, չոր գետնի վրա։ Դրանցից մէկը, որ նոր է եկել միացել իր ընկերներին, սրփում է իր այրուած ճակատի քրտինքը։ Ճաշից յետոյ, մինչև մութը, դա էլի մի քանի բեռներ կը չալակէ և դարձեալ կը քրտնի։ Նայիր, մշակների այդ խմբի մէջ մի երիտասարդ ուժեղ տղամարդ ուրախ դէմքով ու անհամբեր աչքերով, բայց դանդաղ և համարեա վանկ առ վանկ, իր կոչտ մատով կարդում է մի գրած թուղթ։ Միւսները, բոլորեքեանք ծեր, միջակ հասակով, երիտասարդ մարդ ականջները սրած, աչքերը կարդացողի կողմը ուղղած, հաւաքուել են գլխին և ուշադրութեամբ լսում են ժամանակով «տիրացու» եղածի և այժմ «փալան» կրողի կարդալը։—Այդ մի նամակ է որ իր հայրենիքից ստացել է մեր մշակը։ Նորա ընտանիքը իր հայրենական աշխարհումն է գըտնվում։ Նա կապուած է անբաժանելի կապերով իր հողի հետ։ Նա թէև գաղթել է, բայց սըրտով չէ հեռացել, կարճ ժամանակով է գաղթել։ Նորան սպասում են այնտեղ ծերունի հայրը, պառաւ մայրը, աշխատող քոյրերն ու եղբայրները և մանաւանդ իր սիրելի կարօտ կինը։ Նա այդ ամենը կարդաց նամակի մէջ, մի ինչ որ զգաց իր սրտում և ինքը իրան խօսք տուեց անպատճառ վերադառնալ իր ճշմարիտ հայրենիքը, իր սրբազան «մէջլիսը»։

Իսկ մեր հայ հարուստ, ապերախտ հասարակութիւնը, ինչ կասէ, ինչ կանէ, չը, բարեկամ։

Քո Յարոյ

Թիֆլիս, 77 տ. յունիս

*) Տես «Մշակ» № 27.

ինչ մոռացել, ուղղութիւն տային նրան, կրթողական ներգործութիւն ունենային նրա վրա, դեռ չը զարգացած գրականութեան տեղը բռնէին, մասամբ, գրականութեան վերև յիշված ճևերի դերը խաղային, մի խօսքով գրականութեան պակասը լրացնէին....

Իսկ այդ բոլորը անհնարին է անել փոքր դիրք ունեցող, թէև ամեն օր հրատարակվող լրագրի մէջ, մի կողմից որովհետև այդ տեսակ յօդուածների համար տեղ չը կայ, իսկ միւս կողմից որովհետև ամեն օր, թէև փոքր թերթ հրատարակելով, խմբագրութիւնը և խմբագիրը շատ զբաղված լինելով մեքենայական աշխատանքով, նրանց ժամանակ չի մնայ ոչ մոռացած յօդուածներ գրելու, ոչ էլ գրքեր կարդալ շարունակելու....

Լա՜ սանք թէ խմբագիրը ժամանակ գտաւ գրքեր կարդալու և մշակված, կրթողական զարգացնող, ուսանելի յօդուածներ էլ գրեց,—բայց որտեղ տպի... Այդ տեսակ փոքր դիրք ունեցող լրագրի մէջ մշակված յօդուածների համար տեղ չը կայ։

Մենք կրկնում ենք այն ժողովրդի մէջ, որ աղքատ է գրագիտութեամբ, ինչպէս հայոց և վրաց հասարակութիւնները, լրագիրը գրագիտութեան դեր է խաղում։

Մենք գոնէ ունենք մի քանի ամսագիրներ (չենք խօսում նրանց բովանդակութեան մասին), մեզանում բաւական շատ տպվում են գրքեր, գլխաւորապէս թարգմանութիւններ,—իսկ վրացիները այդ էլ չունեն։

Մեր կարծիքով այն ժամանակ նշանակութիւն կունենայ ամեն օր հրատարակել հայոց կամ վրաց թերթ, երբ կարելի կը լինի ամեն օր դուրս բերել մի թերթ ոչ թէ այն միկրոսկոպիական դիրքով, ինչպէս է այժմեան «Դրօէբա» դիրքը, այլ այն մեծութեամբ ինչպէս էր նոյն «Դրօէբա», երբ շաբաթը մէկ անգամ էր հրատարակվում, կամ ինչպէս է այժմ «Մշակը»։

Այն ժամանակ տեղական լեզուով հրատարակվող թերթը կը հասնի վերև յիշված նպատակին։

Մենք այստեղ չենք խօսում լրագրի ուղղութեան վրա։

Դորա մասին գուցէ ուրիշ անգամ կը խօսենք։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԻՑ

«Միջազգային հեռագրական ընկերութիւնը» հաղորդում է Յէոտինիէից յունիսի 5-ից (17) որ յունիսի 3-ին թիւրքաց զօրքը առանց կռուի կարողացաւ պաշար բերել Նիկշիչ բերդը։ Մի և նոյն օրը Վասօեվիչի մօտ ճակատամարտ եղաւ չէրնօգորցիների և 15,000 թիւրքերի մէջ, Մահմէդ-Ալիի առաջնորդութեամբ։ Թիւրքերը բոլորովին ջարդվեցան։ Յունիսի 4-ին թիւրքերը չորս անգամ յարձակվեցան չէրնօգորցիների վրա, բայց յետ մղվեցան մինչև Նավենա-Գլավեցա և յետ քաշվեցան մինչև Սպուժա, թողնելով 2000 դիակներ։ Չէրնօգորցիների կողմից սպանվեցան և վիրաւորվեցան 115 մարդ։—Պատերազմական բեմից (Մացրայից) պաշտօնապէս հաղորդում են յունիսի 7-ին հետևեալ հեռագիրը, որ տպված է տեղական ռուս լրագիրներում։ Յունիսի 5-ին սկսվեցաւ Ղարսի ռմբակոծութիւնը։ Հրաձգութիւնը բերդից շատ սաստիկ է։ Երկու օրվա մէջ մեր կողմից սպանված են երկու սօլդատներ և վիրաւորված են երեսուն։ Վիրաւորված է նոյնպէս արտիլերիայի օֆիցէր Յէդլէր։—Յունիսի 8-ից հեռագրում են որ ռմբակոծութիւնը շարունակվում։ Թշնամու հրաձգութիւնը թոյլ է և մեր կողմից կորուստներ չը կան։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻՄ ՆՈՐՈԳ ԲԱՑՈՒԵԼԻ ՌՈՒՍԱՑ ԵՒ ՀԱՅՈՑ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գօրի քաղաքում հիմնված Անդրկովկասեան ուսուցչական դպրանոցի պ. Դիրեկտօրը ուղարկելով մեզ հետևեալ ծանուցումը, խնդրում է տպել նրան մեր լրագրի էջերում։

Անդրկովկասեան ուսուցչական դպրանոցում կարդացվում է բաց անել երեք գաղափարական դպրոցներ՝ Ռուսաց, Վրաց, և Հայոց։ Վրաց դպրոցի բացումը արդէն յառաջացաւ անցեալ 1876 թվի սեպտեմբերի ամսում։ Իսկ այս տարուայ սեպտեմբերի սկզբին մտադրութիւն կայ միւս երկու դպրոցներ ևս բանալու, այս է՝ Ռուսաց և Հայոց, եթէ կը գտնուին նոցանից ամեն մէկի մէջ մտնող երեխայք թւով ոչ պակաս վեցից։ Հայոց տարրական դպրոցում դասաւանութիւնը կը լինի սկզբում հայոց լեզուով, որի օգնութեամբ երեխայք սահմանն առ սահմանն կը սկսեն ուսանել ռուսաց լեզուն և կը ստանան կարևոր նախապատրաստութիւն տէրութեան այլ և այլ դպրոցները և նոյն իսկ ուսուցչական դպրանոցի նախապատրաստական դասատուները մտնելու։ Բայց, որովհետև Գորուբաբնակ հայերի համար գործածական չէ համարվում հայոց լեզուն, իսկ հայոց տարրական դպրոցի համար ցանկալի է ունենալ այնպիսի երեխայք, որոց համար հայոց լեզուն լինէր բնական, ուստի ուսուցչական դպրանոցի վարչութիւնը, կամենալով հեշտացնել օտարաքաղաքացի ծնողաց համար իրանց որդւոց Գորի ուղարկելու և այնտեղ պահելու միջոցը, առաջարկում է այդպիսի երեխայոց, իբրև դրամական օժանդակութիւն, տարեկան քառասուն ռուբլի արծաթ, այն գումարից, որ դպրանոցի շատտովը սահմանուած է ի նպաստ օտարաքաղաքացի աշակերտաց, որոնք ուսանում են նոյն դպրանոցի տարրական դպրոցներում։

Ուսուցչական դպրանոցը, հաստատելով սորա մասին ի գիտութիւն օտարաքաղաքացի հայ բնակչաց, հարկաւոր է համարում աւելացնել և այս, որ տէրութենից տարեկան 40 ռուբ. օժանդակութիւն կարող են ստանալ ցանկացողներից միայն վեց հոգիք, որովհետև շատտով սահմանուած միացեալ փողերը պիտի մասնաբաժնուին աշակերտաց միւս երկուց տարրական դպրոցաց այս է՝ ռուսաց և վրաց։ Ուրեմն այն ծնողները որոնք կը ցանկան իրանց որդւոց դաստիարակել նորոգ բացուելի ռուսաց և հայոց դպրոցներում, թող բարեհաճեն կանխիկ մինչև օգոստոսի մէկը փոստայով ուղարկել իրանց ինդրագիրները յանուն նոյն դպրանոցի կառավարչի, որին հարկաւոր է նախապէս իմանալ, թէ որքան են արդեօք ցանկացողները, որովհետև մտադրեալ տարրական դպրոցների բացումը, ինչպէս վերև էլ ասուած է, կարող է իրագործվել միայն այն ժամանակ, երբ որ ցանկացողաց թիւը կը լինի ոչ պակաս վեցից։ Օտարաքաղաքացի ծնողները, որոց որդւոց կը սահմանուի տարեկան օժանդակութիւնը, կանխիկ կը ստանան գրաւոր տեղեկութիւն առ այն, թէ երբ պիտի հացնեն իրանց որդւոցը ի Գորի։ Ընդունուելի աշակերտաց հասակը պիտի լինի եօթն և կէս տարեկանից ի վեր։ Այս ևս յայտնի լինի ամենեցուն, որ նոյն տարրական դպրոցների աշակերտները, ուսման ընթացքը աւարտելուց յետոյ, եթէ կը յօժարին ուսուցչական դպրանոցի նախապատրաստական դասատուները մտնելու, ձրիաթոշակ աշակերտների պարապորդ տեղերը լցնելու ժամանակ, նոքա աւելի նախապատիւ կը համարուին, քան թէ միւսները, որոնք չեն սովորել նոյն տարրական դպրոցներում։

«ԿԱՒԿԱՍՅԱ» ԼՐԱԳԻՐԸ ԵՒ ՄԵՐ ԴԱՏԱՒՈՐՆԵՐԸ

Մենք յիշեցինք մեր լրագրի անցեալ համարներից մէնի մէջ որ «Кавказъ» լրագիրը խօսելով այն հարցի վրա թէ ոմ՞քեր պէտք է լինեն դատաւորներ մեր երկրում, այն եղրակացութեան է գալիս թէ այդ տեղերը գլխաւորապէս ռուսներին պէտք է տալ։ Այդ պատճառով «Кавказъ» լրագրի և միւս տեղական ռուս թերթի, «Тифл. Вѣстн.» լրագրի մէջ յարուցվեցաւ բանակռուութիւն։ Մեր կարծիքով «Тифл. Вѣстн.» լրագիրը նոյնպէս սխալ ուղղութիւն էր տուել հարցին, պատասխանելով պաշտօնական թերթին, թէ նա չէ պահանջում որ դատաւորները մեր երկրում անպատճառ տեղացիները լինէին, այլ կուզենար որ դատաւորը, որ ազգութեան և պատկանէր նա, իր պաշտօնը ճիշդ և արդիւնաւոր կերպով վարելու համար իմանար մի որ և է տեղական լեզու, այն լեզուն, որ գործ է ածվում նորա հետ անմիջական յարաբերութիւն ունեցող ժողովրդի մէջ։

«Тифл. Вѣстн.» լրագրի նկատողութեանը «Кавказъ» լրագիրը պատասխանեց որ նա չէ խօսում Անդրկովկասի վրա, այլ միայն Կովկասեան նահանգի վրա, որտեղ հազար ու մէկ լեռնաբնակ ազգեր և ցեղեր կան, որոնք խօսում են հազար ու մէկ բարբառներով, որոնց անհնարին է սովորել դատաւորին կամ մի այլ պաշտօնեային։

Մեր կարծիքով «Тифл. Вѣстн.» սխալ կերպով էր հասկացած «Кавказъ» լրագրի սկզբնական միտքը, իսկ այս վերջինը, ռուս անկախ լրագրի պատասխանից յետոյ, բոլորովին շեղվեցաւ իր սկզբում յայտնած մտքերից։

Դատաւորների վերաբերութեամբ «Кавказъ» լրագրի առաջին յօդուածը, գուցէ անգիտակցաբար այն միտքն էր յայտնում, որ միայն ռուս տարրը ընդունակ է մեր երկրի մէջ անկողմնապահութեամբ, բարեխղճութեամբ և ճշդութեամբ դատաւորի ծանր պաշտօնը կատարելու։ Ամբողջ յօդուածից շնչում էր այն ոգին, որ տեղացիների վրա պէտք է նայել որպէս անչափահասների, կամ մինչև անգամ որպէս պետութեան անդամների այդ գործի համար անպէտք տարրի վրա, որպէս հասարակական վիժմունքի վրա... Լրագիրը նայում էր տեղացիների վրա՝ կամ որպէս պետական պաշտօններ վարելու համար դեռ ևս տհաս տարրի, կամ որպէս պետութեան պարիսանների վրա։

Այդ ուղղութեամբ, մեր կարծիքով, և պէտք է պատասխանէր «Тифл. Вѣстн.» լրագիրը։ Գոնէ մենք այդ կերպով հասկացանք ռուս պաշտօնական լրագրի միտքը, և այս մտքով էլ պատասխանեցինք նրան «Մշակի» 31 համարում։

Իսկ «Тифл. Вѣстн.» լրագիրը այն սխալն արաւ, որ սկսեց պատասխանել «Кавказъ» լրագրի մտքերին, եթէ այդպէս կարելի է ասել, մանկավարժական կէտից, ապացուցանելով նրան որքան օգտաւէտ է մի ժողովրդի մէջ գործել և ժողովուրդը դատել, նրան կառավարել, նրա հետ անմիջական յարաբերութիւններ ունենալ նորա մայրենի լեզուով.... Նա սկսեց զարգացնել մայրենի լեզուի մի ժողովրդի վրա կրթողական ներգործութեան միտքը։

Եւ «Кавказъ» լրագիրը իսկոյն յետ քաշվեցաւ իր սկզբնական մտքից, հաստատելով որ մայրենի լեզուի կրթողական նշանակութեան կողմից բոլորովին բաժանում է «Тифл. Вѣстн.» լրագրի միտքը։

Բայց ռուս պաշտօնական թերթի սկզբնական միտքը հակամանկավարժական չէր, այլ հակապետական էր։ Նա շնչում էր այն գաղափարով, որ հարկաւոր չէ պետութեան բոլոր քաղաքացիներին անխտիր միջոց տալ հանել դատաւորների պաշտօնին, բայց որ այդ պաշտօնների վարելը մէկ տեսակ արտօնութիւն պէտք է լինի ռուս ցեղին պատկանող պետութեան քաղաքացիների ձեռքում։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Յունիսի 5-ին

Նորաչէնի Ս. Մարիամեան օրիորդական ուսումնարանի հոգաբարձութիւնը խնդրում է տեղ տալ ձեր թերթի մէջ հետևեալ ծանուցման։

Ս. Մարիամեան օր. ուսումնարանը երկու նշանաւոր նուիրատուութիւններ է ստացել. մէնը 1873 թ. հանգուցեալ Սողոմոն Կուզանեանից և միւսը 1877 թ. Գր. Իզմիրեանից, որոնց մասին այժմ հոգաբարձութիւնն իր պարտքն է համարում յայտնել հասարակութեան։ Հանգուցեալ Սողոմոն Կուզանեանի նուիրատուութիւնը կազմով է եղած և ուսումնարանիս վերադիտող Տէր-Սրապիոն աւագ քահանայ Տէր-Մովսէսեանցի յորդորանքով. բաղկացած է Գանձակ քաղաքի մէջ գտնված կալուածքի չորրորդ մասից, որը կապալով է տուած և տարեկան 720 ռուբլի արդիւնք է բերում սկսած 1874 թ. նոյեմբերից։ Ի պատիւ հանգուցեալ Ս. Կուզանեանի այսուհետև ձրիավարժ աշակերտուհիներից տասը հոգի պէտք է անուանվեն «Սանուհիք Ս. Կուզանեանի»։ Երկրորդը, ինչպէս արդէն յայտնի է, այն է, որ պ. պ. Իզմիրեան եղբայրները ի յիշատակ իրանց հանգուցեալ եղբոր Դանիէլի նուիրեցին ի միասին 15 հազար ռուբլի Ս. Մարիամեան և Ս. Մինասի արական դպրոցներին։ Հոգաբարձութիւնս յայտնում է, որ պ. Գրիգոր Իզմիրեանցի ուսումնարանին նուիրած բաժնի—4374 ռուբլու արդիւնքը վայելել սկսեց, ստանալով փետրվարի 3-ին ներկայ տարուս եռամսեայ տոկոսը—65 ռուբլի 61 կ. կանխաւ (թէև ըստ պայմանաթղթի երեք ամսից յետոյ պէտք է ստացուէր) և վեց տարի շարունակ այդքան տոկոսը պէտք է ստանայ երեք ամիսը մի անգամ, համաձայն նուիրատուութեան թղթին, մինչև որ նուիրատուք այդքան ժամանակի միջոցում կարողանան անչարժ կալուածքներ գնել, իւրաքանչիւրը իր նուիրած բաժնով կամ դնել այստեղի արքունական բանկի բաժանման մէջ մշտական, եթէ այս վերջինը կը ստանայ թոյլատրութիւն մշտական ընդունելու։ Նուիրատուի ցանկութեան համաձայն ուսումնարանում ձրի ուսում պէտք է ստանան 10 չքաւոր օրիորդներ և անուանվեն «Սանուհիք Դանիէլ Իզմիրեանցի»։ Արդէն ընտրուեցան տասը աշակերտուհիք։ Նուիրատուութեան պայմանաթուղթը, որ հաստատուած է ինչպէս հարկն է օրինաւոր կերպով, հատատ պարտամուրհակ է, որի իսկականը գտնվում է վիճակային կոնսիստորիայում, իսկ պատճէնը հոգաբարձութեան մօտ։

Ռուսական նաւատորմիղի հոգատարութիւնը հաղորդելով հասարակութեան այս ուրախալի և ազգօգուտ լուրը՝ յայտնում է հրապարակաւ իր խորին շնորհակալութիւնը մասնաւորապէս պ. Գրիգոր Իզմիրեանին, որ իր բաժինը լիովին այս օրհնութեան ուսումնարանին նուիրեց, որ իրաւ օգնութեան չատ կարօտութիւն ունէր։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Кавказъ» լրագրին պաշտօնապէս հաղորդում են ՕԿՈՒՄԻՑ, յունիսի 6-ից, որ թշնամու դէմ ուղարկված հեծելազօրքը, ոչ մի տեղ թշնամուն չէ պատահել։ Թշնամու փախուստը ապացուցված է նորանով, որ ամեն օր գտնվում են ընկած դիակներ։ Լսվում է որ յունիսի 2-ին եղած կռուի պատճառով, ապստամբված աբխազների մէջ ներքին երկպառակութիւններ սկսվեցան։

—

Մասնաւոր նամակից տեղեկանում ենք, որ ԹԻՖԼԻՍՈՒՄ ընկած սարսափելի կարկուտից յետոյ, նոյնը կրկնվեցաւ և Կախէթում, որտեղ բաւական չատ այգիներ փչացան։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ հեռագրում են «Кавказъ» լրագրին, յունիսի 8-ից, որ ռուսաց փողերի կուրսը 3 ամսով հետեւեալն է։ Ռուսաց ռուբլի 3 ամսով Լօնդօնի վրա փոխանակութեամբ, արժէ 25^{50} պէնս, Փարիզի վրա 271 սանտիմ. Ռուսաց 5% առաջին ներքին փոխառութեան տոմսակը արժէ 208 ր., երկրորդին 201 ր., պետական բանկի 5% տոմսակը առաջին չրջանի արժէ 94 ր. 50 կոպ., երկրորդ չրջանի 93 ր. 12 կոպ., 5½% րէնտա արժէ 100 ր. 5 կոպ.։ Պոլուիմպերիալի գինը 7 ռուբլ և 70 կոպէկ է։

—

ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են՝ «Մեր ուսումնարանը ստանում է հետեւեալ պարբերական հրատարակութիւնները՝ «Մշակ», «Մեղու Հայաստանի», «Հայկական Աշխարհ» «Արարատ», «Тифлисскій Вѣстникъ», «Биржев. Вѣдом.». և «Вечерн. Газета.»

—

Լսում ենք որ յունիսի 3-ին և 4-ին եղած սաստիկ կարկուտը մօտ 40 հազար ռուբլու ապակի է կոտրել ԹԻՖԼԻՍԻ տներում։ Ամբողջ քաղաքում ապակի չէ ճարվում, կամ 60 կոպէկանոց փոքրիկ ապակի ծախվում է 1 ռուբլ, մինչև անգամ 1 ռուբլ 50 կոպէկ։

—

ՄԱՆԳԼԻՍԻՑ գրում են «Кавказъ» լրագրին որ այնտեղ էլ սաստիկ կարկուտ է եկել և բաւական վնաս է տուել թէ արտերին և թէ այգիներին։

—

«Тифл. Вѣстн.» լրագիրը կարծում է որ ԹԻՖԼԻՍՈՒՄ եկած կարկուտը առհասարակ քաղաքին աւելի քան 500,000 ռուբլու վնաս է տուել, հաշուելով թէ կոտրած ապակիները, թէ վնասված այգիները։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

«Հավասի հեռագրական ընկերութիւնը» յունիսի 6-ից հաղորդում է Փարիզից, որ Ֆրանսիական պատգամաւորների ժողովի այն օրվայ նստի մէջ արտաքին գործերի մինիստր Հերցօգ Դէկազ պատասխանելով Գամբէտտային, յայտնեց որ Ֆրանսիայի և եւրոպական այլ պետութիւնների մէջ անխախտ մնում են նոյն խաղաղական յարաբերութիւնները, և որ նոր մինիստրութիւնը իր գործունէութեան գլխաւոր նպատակ է համարում ապահովել Ֆրանսիա խաղաղութեան բոլոր բարիքներով, որքան հնարաւոր է երկար ժամանակով։—Սենատը 9 անդամներից բաղկացած առանձին մասնաժողով է ընտրել, հանրապետութեան նախագահի կողմից արած՝ Պատգամաւորների ժողովի արձակելու առաջարկութիւնը նախապէս քննելու համար։ Այդ մասնաժողովի ինն անդամներից միայն երեք անդամներ հակառակ են մարշալ Մակ-Մահոնի առաջարկութեանը։ Մասնաժողովի վերկացումը մտցրած կը լինի Սենատը յունիսի 7-ին, կամ 8-ին (20-ին)։—Ֆրանսիական «La France» լրագիրը, որի խմբագիրն է Էմիլ դը-Ժիրարդէն, առաջարկում է մարշալ Մակ-Մահոնին հանրապետութեան նախագահի պաշտօնից հրաժարականը տալ։—«Հավասի հեռագրական ընկերութիւնը» հաղորդում է որ Ֆրանսիական պատգամաւորների ժողովի յունիսի 4-ին նստի մէջ, երբ քննվում էին այն շարժառիթները, որոնք ստիպեցին Մակ-Մահոն մարշալին կատարել իր յեղափոխութիւնը, պատգամաւորների ձախ կողմի առաջնորդ Լէօն Գամբէտտա, յայտնեց որ հանրապետական կուսակցութիւնը կը հրատարակէ Թիէրին հանրապետութեան նախագահի կանդիդատ, եթէ որ և է պատճառով մարշալ Մակ-Մահոն իր պաշտօնից հրաժարական կը տայ։—Փարիզից, յունիսի 7-ից (19) հեռագիրը հաղորդում է որ Պատգամաւորների ժողովը ձախ կողմի առաջարկութիւնը քննելու ժամանակ 363 ձայների բազմութեամբ 158 ձայնի դէմ յայտնեց իր պարսաւանք հերցօգ Բրոլլիի մինիստրութեանը։ Երբ քուէարկութեան հետեւանքը յայտնի եղաւ, մինիստրներից մինը յայտնեց որ շուտով Ֆրանսիան իր նոր ընտրութիւններով կը տայ իր դատողութիւնը Պատգամաւորների ժողովի հանրապետական և պահպանողական կուսակցութիւնների մէջ ծագած հակասութիւնների մասին։

ԹԻՒՐՔԻԱ

—

Մինչև որ ռուս-թիւրքաց պատերազմը շարունակվում է, թիւրքաց տէրութիւնը աշխատում է մտցնել պետութեան մէջ մի նոր օրէնք, այն է ընդհանուր զինուորագրութեան պարտաւորութիւնը և թիւրքահպատակ քրիստոնեաների համար։ Մենք յիշեցինք մեր անցեալ համարներից մինի մէջ թէ ինչ կարծիքներ են յայտնել այդ նոր օրէնքի մասին մի քանի հայոց լրագիրներ, ինչպէս օրինակ «Նոր Դար» և «Մանզումէի Էֆքեար» թերթը։ Այժմ գտնում ենք լրագիրներում որ գրեթէ նոյն կամ նման կարծիքներ յայտնում է ընդհանուր զինուորագրութեան օրէնքի վերաբերութեամբ և Կ. Պոլսի յունաց մամուլը։ Յունաց լրագիրները յայտնում են այն միտքը թէ մինչև որ թիւրքահպատակ քրիստոնեաները մահմեդականներին կատարելապէս հաւասար իրաւունքներ չեն վայելի, նոքա միշտ կը հրաժարվեն երթալ պատերազմ և արիւն թափել այն պետութեան համար, որ նրանց վրա նայում է որպէս խորթ մայր։ Մի քանի լրագիրներ այն միտք էին յայտնում որ չեն կարող գնալ Ռուսաստանի դէմ, որովհետև Ռուսաստանը պատերազմ է յայտնել ոչ թէ անձնական շահերի համար, այլ մարդկային ընդհանուր սկզբունքի վրա հիմնվելով, քրիստոնեայ ազգերի բարոյական ազատութեան համար զէնք է վեր առել։ Ուրիշ կողմից շատ լաւ կը լինէր եթէ թիւրքահպատակ քրիստոնեաներն էլ իրաւունք ունենային զօրքի մէջ մտնելու, կամ առանձին գնդեր կազմելու, որովհետև զինուորական պարտաւորութիւնը կրելով, ամենահեշտ կերպով կարելի է ամենանհրաժեշտ իրաւունքները պահանջել և հարկաւոր ժամանակ կարելի է և իրան պաշտպանել ձնշման դէմ։ Այն ժողովուրդը որ պատկանելով մի որ և է պետութեան ամբողջութեանը, կամենում է վայելել շատ իրաւունքներ, առանց որ և է ծանր պարտաւորութիւն կրել ուզենալ,—այդ տեսակ ժողովուրդ արժանի չէ որ և է իրաւունքներ ստանալու և վայելելու։ Բայց պէտք է խոստովանվել և այն, որ թիւրքիայի քրիստոնեաները մեծ մասամբ սովոր էլ չեն զինուորական լինելու, երբէք վարժված չը լինելով զէնք կրելու, և որքան ցանկալի է թէ նոքա էլ ենթարկված լինէին ընդհանուր զինուորագրութեան օրէնքին, որպէս զի վարժվեն զէնք կրելու, ընդունակ լինէին հարկաւոր ժամանակ իրանց անձը և իրանց իրաւունքը ձնշման դէմ պաշտպանելու,—այնքան էլ անխղճութիւն պէտք է համարվի եթէ թիւրքիան ստիպէ նրանց այժմ զէնք վերցնելու և առանց երբէք նրանց վարժած լինելու զէնքի գործածութեան, իսկոյն ուղարկի պատերազմ։ Այդ տեսակ վերանորոգութիւն պէտք է մտցնվի մի որ և է երկրում փոքր առ փոքր և խաղաղութեան ժամանակ և ոչ թէ պատերազմի մէջ տեղ։

ԱՆԳԼԻԱ

—

«Հավասի հեռագրական ընկերութիւնը» հաղորդում է Լօնդօնից յունիսի 7-ից (19), որ Անգլիայի մայրաքաղաքում լուր կայ իբր թէ տէրութիւնը շուտով պահանջելու է պարլամենտից հինգ միլիօն ֆունտ ստերլին գումարի կրեդիտ։ Այդ լուրը մեծ տպաւորութիւն է գործել Անգլիայի հասարակական կարծիքի վրա։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Փարիզից «Հավասի հեռագրական ընկերութիւնը» հաղորդում է որ չէրնօգորցիները դժուար դրութեան մէջ են գտնվում, որովհետև 70,000 թիւրքեր, երեք կողմերից՝ հիւսիսից, արևելքից և հարաւից մօտենում են Չէրնօգորիային։ Իշխան Նիկոլայի զօրքերը ստիպվեցան թողնել Դուժեան անցքը և այժմ կենտրոնանում են Օսարօգի լեռնային անցքում։

—Լօնդօնից հեռագրում են յունիսի 7-ից (19) որ իբր թէ երկու ռուսաց շոգենաւեր երևեցան Մատապանի առջև, Յունաստանում։

—«Politische Corresp» լրագիրը հաւատացնում է որ կոմս Շուվալովի ձեռքով անգլիական տէրութեանը յանձնած պաշտօնական թղթից յետոյ անգլիական կաբինետի ցանկութեան համեմատ Ռուսաստանը լիազօր իրաւունք տուեց Շուվալովին յայտնել, որ Ռուսաստանը կը յարգէ Անգլիայի օգուտները Սուէզի ջրանցքի, Եգիպտոսի և Պարսից ծոցի վերաբերութեամբ։ Շուվալովից անգլիական տէրութեանը տուած բացատրութիւնները լաւ տպաւորութիւն ունեցան թէ անգլիական, թէ այլ եւրոպական պետութիւնների հասարակական կարծիքի վրա։

—«Journal de St. Petersb» լրագրում կարդում ենք որ պարսից դեսպան Կ. Պոլսում, Մուհսինխան, նորերումս պաշտօնապէս յայտնեց թիւրքաց տէրութեանը որ Պարսկաստանը կը պահպանէ բարեկամական յարաբերութիւններ թիւրքիայի հետ և որ եղբայրական զգացմունքներ Սուլթանի և շահի մէջ, և նոյնպէս երկու երկիրների՝ Պարսկաստանի և Թիւրքիայի, նոյն դաւանութեան, մահմեդականութեան պատկանելը,—չեն թոյլ տայ որ այդ երկու երկիրների մէջ ծագեն երկպառակութիւններ։ Պաշտօնական թուղթը որ ներկայացրած է պարսից դեսպանից թիւրքաց արտաքին գործերի մինիստրին Սավֆէտ-փաշային, աւելացնում է որ Պարսկաստանի և թիւրքիայի մէջ իբր թէ ծագած երկպառակութեան և պատերազմի հնարաւորութեան լուրերը, հիմնովին սուտ են։

—«Agence Générale Russe» հաղորդում է որ չուտով Յունաստանը պատերազմ կը յայտնէ թիւրքիային։

—Յունիսի 9-ին Գամբէտտա այցելեց Ամիէն քաղաքը, որտեղ ընդունվեցաւ բնակիչներից ոգևորված կերպով։ Երեկոյեան տրվեցաւ Գամբէտտային ճաշ քաղաքագլխի ներկայութեամբ։ Ճաշի ժամանակ Գամբէտտա առաջարկեց մի տօստ «հանրապետական կուսակցութիւնների միութեանը» այսինքն բոլոր ազգասէրների միանալուն հանրապետութեան դրօշակի տակ։

—Յունաստանը կամենում է նոր փոխառութիւն անել և սկսել է բանակցութիւնները Ռոտշիլդի հետ։

—«Русскій Міръ» հաղորդում է որ գերմանական տէրութիւնը արգելել է իր երկրում այն ռուսերէն գրքերի ծախելը, որոնք տպվում են Ռուսաստանից դուրս և ունեն Ռուսաստանին հակառակ ուղղութիւն։

—Ռումինիայի տէրութիւնը մի պատուանշան է շնորհել Կարլ իշխանին, որովհետև նա ներկայ էր գտնվում Քալաֆատի մէջ ռմբակոծութեան ժամանակ։

—Աթէնքից հեռագրում են որ ժողովուրդը պատերազմ է պահանջում։ Էփիրոսի և Թէսալիայի մէջ ապստամբութիւնը ընդարձակվում է։

—Թիւրքերը կենտրոնացնում են իրանց զօրքերը Սերբիայի սահմանների մօտ։ Ռուսաց զօրքի Դունայի վրա անցնելը սպասվում է այս օրերս։

—Յունիսի 5-ին ներկայացաւ Անգլիայի Նօրմանտ կանցլերին անգլիական կանանց պատգամաւորութիւնը, խնդրելով որ մտցնվի պարլամէնտի վիճաբանութիւնների մէջ կանանց քաղաքական և ընտրողական իրաւունքներ տալու առաջարկութիւնը։ Պետական կանցլեր պատասխանեց որ ինքն համոզված է թէ կանանց պատգամաւորութեան պահանջը արդարացի է, բայց կարծում է որ նոցա քաղաքական իրաւունքներ տալու նշանաւոր վերանորոգութեան իրագործման ժամը դեռ չէ հասել։ Երևի կանանց առաջարկութիւնը այս անգամէ չի ընդունվի պարլամէնտից։

—Բէրլինից հեռագրում են որ գերմանական Բայխստագի (պատգամաւորների ժողովի) լրացուցիչ ընտրութիւններում երկու կանդիդատներից՝ սոցիալ-ռամկապետական կուսակցութեանը պատկանող Հազընկլէվեր աւելի ձայներ ստացաւ քան թէ առաջադիմական կուսակցութեանը պատկանող Լուդվիգ Լէվէ։ Ընտրվեցաւ ուրեմն Հազընկլէվեր։

—Եւրոպական լրագիրները հաղորդում են որ չէրնօգորցիները ջարդվեցան թիւրքաց զօրքից Օսարօգի լեռնային անցքում։

—«Polit. Corresp.» լրագրին հեռագրում են Բէլգրադից որ Սերբիան դիտաւորութիւն ունի չեզոք մնալ ներկայ պատերազմի ժամանակ։

—Կ. Պոլսից հեռագրում են որ տէրութեան հրամանով Մէկկայի գանձը տեղափոխում են Կ. Պոլիս։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այժմ, երբ արևելեան պատերազմը գրաւում է ամենի ուշադրութիւնը, մեր հեռաւոր երկիրներն էլ դարձել են եւրոպացիների մօտ խօսակցութեան առարկայ։ Ֆրանսիական լրագիրներում գտնում ենք Թիֆլիսի հետեւեալ նկարագրութիւնը։ «Թիֆլիս քաղաքը, որ արևելեան պատերազմի պատճառով նոյն Կովկաս երկրի ուրիշ չատ քաղաքների հետ գրաւում է հասարակաց ուշադրութիւնը, այժմ ռուսաց կայսրութեան Կովկասեան փոխարքայութեան գլխաւոր տեղն է և կենտրոն վրաստանի ռուսաց կառավարութեան։ Նա շինված է մի սարի վրա, Կուր գետի երկու ափերին, որ բղխում է Ասիական թիւրքիայում (Հայաստանում), 50 վերստ հեռու Ղարսից և թափվում է Կասպից ծովը մօտ 900 վերստ ընթացք կատարելուց յետոյ։ Քաղաքի երկու ափերը միացած են մի գեղեցիկ քարաշէն կամուրջով։ Թիֆլիսը հիմնվեց 489 թուին և իր դրութեամբ անմիջապէս մեծ նշանակութիւն ստանալով, առաջացաւ արագաբար։ Մօնգոլները Չինգիսխանի առաջնորդութեամբ Կասպից ծովի կողմերին իրանց արած արշաւանքի ժամանակ տիրապետելով այդ քաղաքը, աւերեցին նրան։ 1576 թուին Օսմանցիները նորան տիրեցին և չթողեցին այնտեղ մի բերդ, որ մնում է մինչև օրս։ Նա անցնում է ռուսաց ձեռքը ներկայ դարիս սկզբում, և այդպիսով ստանում է մի նոր գոյութիւն, որ նորան ներկայ բարօրութեան է հասցնում։ Թիֆլիսը չնված է ասիական ձևով, նեղ և կեղտոտ փողոցներով, բայց նոր քաղաքը պարունակում է գեղեցիկ շինութիւններ, մեծ զօրանոցներ, հիւանդանոցներ, կարվանսարաներ, ընդարձակ և գեղեցիկ շինութիւններ, ինչպէս փոխարքայի պալատը, և զանազան կառավարչական տները։ Նորա ծծմբային բաղնիքները, որոնցից ստացել է նա իր անունը՝ Թիֆլիս, որ վրացերէն (Տպիլիսի) նշանակում է տաք ջրերի քաղաք, հռչակված են։ Նորա արուեստաշահութիւնը և վաճառականութիւնը քաշում են այնտեղ բազմաթիւ օտարականներ։ Պէտք է աւելացնել, որ քաղաքից վայելած օրինաւոր արտօնութիւնները, որոնք շնորհված են նրան ռուսաց կառավարութեան ձեռքով, խիստ գիւրացնում են նորա առևտրական յարաբերութիւնները։ Բայց վերև յիշված շինութիւններից, քաղաքը պարունակում է քսանի չափ եկեղեցիներ, որոնց մէկը հայակաց կաթողիկէ, մայր եկեղեցի է։ Ունի երեք մզկիթներ, հարուստ վաճառանոց, և մի մեծ զինարան։ Քաղաքի բազմամարդութիւնը ենթարկվեցաւ խիստ զգալի փոփոխութեանց։ Մեծ խօլերայից

յետոյ նորա բազմամարդութիւնը չափաւորվեցաւ մինչև 10,000 հոգի, իսկ անուհետև նա աճել է արագաբար, և այժմ նորա բնակիչների թիւը հասել է մինչև 80,000 հոգի։»

***

Անուանի օդագնաց Իակօբի անցեալ ապրիլ ամսում «Ֆիլադէլֆիա» անուանված օդապարիկով, մի քանի ընկերների հետ միասին, անցել է ամբողջ Ատլանտեան ովկիանոսի վրայով 60 ժամում։ Ապրիլի 28-ին, հինգշաբթի օրը, նա թողել է Ֆիլադէլֆիա քաղաքը (Ամերիկայում), իսկ նոյն ամսի 30-ին, շաբաթ օրը, երեկոյեան, աջողութեամբ հասել է Ֆրանսիայի Ռէնն քաղաքը։

***

Վերջին վիճակագրական տեղեկութիւններից երևում է որ ամբողջ երկրագնդի ազգաբնակութիւնը բաղկացած է 1,423,917,000 հոգուց, որոնք բնակվում են 2,444,800 քառակուսի մղոն ունեցող երկրի տարածութեան վրա։ Ուրեմն մի գերմանական մղոնի վրա բնակվում են 582 հոգի։

***

Երևելի բուսաբան Լէվի, ինչպէս հաղորդում են լրագիրները, գտել է Նիկարագվայում մի էլէկտրական բոյս։ Նա պատահմամբ մի անծանօթ բոյս տեսնելով, կամեցել է մի ճիւղ կտրել նրանից, յանկարծ զգացել է մի հարուած, ինչպէս էլէկտրական մեքենայից։ Մագնիսեայ սլաքը այդ ծառից արդէն մօտաւորապէս 10 քայլ հեռաւորութեամբ սկսում էր շարժվել, իսկ երբ որ ուսումնական ճանապարհորդը կախ էր տալիս ծառի վրա մագնիսեայ սլաքի տուփը, սլաքը անընդհատ սկսում էր շարժվել սաստիկ արագութեամբ։ Սաստիկ անձրևի ժամանակ բոյսը թառամում էր։ Նորա վրա չէր նատում ոչ մի միջատ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹԵԱՆ խընդրում է պ. պ. հիմնադիրներին և նոյնպէս նոցա ամենքին, որոնք ցանկանում են անդամ գրվել Ընկերութեան մէջ, մտցնել իրանց անդամական վճարը Ընկերութեան գանձապահին պ. Ա. Գ. Սէրգէեվին, որ ընդունում է ամեն օր առաւօտեան, ժամը 9½, մինչև 1½, կէսօրից յետոյ, Թիֆլիսի Փոխադարձ Կրեդիտի Ընկերութեան ընակարանում։ Ընկերութեան Օգոստափառ Հովանաւորից Մեծ Իշխան Կովկասեան Փոխարքայից հաստատված կանոնադրութեան զօրութեամբ, գործնական անդամը վճարում է տարեկան 3 ռուբլ, կամ միանուագ 30 ռուբլ, իսկ պատուաւոր անդամ մտցնում է միանուագ 300 ռուբլ։ Այն անդամը, որ միանուագ մտցրել է 30 ռուբլուց ոչ պակաս, իրաւունք ունի իր վրա մանածել մի առանձին մետալական նշան։

Աւելի մանրամասն բացատրութիւններ ստանալու կամ ընկերութեան գործերի վերաբերութեամբ որ և է բան յայտնելու ցանկացողները կարող են դիմել Ընկերութեան քարտուղարին պ. Վ. Ն. Տրէսկովսկուն, որ երկուշաբթի և հինգշաբթի օրերը առաւօտեան 10½ ժամից մինչև 2 կէսօրից յետոյ գտնվում է Սարաջևի տանը, Գոլովինսկի պրոսպէկտի վրա, въ Управленіи Кавказскаго коннозаводскаго Округа, որտեղ և գտնվում է Ընկերութեան վարչութիւնը։

3—3 (1)

Правленіе Тифлисскаго Общества Покровительства животнымъ проситъ г. г. учредителей, а также и всѣхъ, желающихъ вступить въ члены Общества, вносить членскіе платежи г. казначею Общества, А. Г. Сергѣеву, принимающему ежедневно, отъ 9½ час. до 1½-но полудни, въ помѣщеніи Тифлисскаго Общества Взаимнаго Кредита. По утвержденному Августѣйшимъ Покровителемъ, Намѣстникомъ Кавказскимъ, уставу дѣйствительный членъ платитъ ежегодно по 3 руб., или единовременно 30 руб.; почетный членъ вноситъ единовременно 300 руб.; членъ, сдѣлавшій единовременный взносъ не менѣе 30 руб.; имѣетъ право ношенія особаго металлическаго знака.

Желающіе получить болѣе подробныя разъясненія или едѣлать какія либо заявленія по дѣламъ Общества имѣютъ обращаться къ г. секретарю Общества, В. Н. Тресковскому, который по Понедѣльникамъ и Четвергамъ, съ 10½ до 2 час. дня, находится въ Управленіи Кавказскаго Коннозаводскаго Округа (Головинскій проспектъ, домъ Сараджева), гдѣ помѣщается и Правленіе Общества.

3—3 (1)

Մի Ֆրանսուհի ՏԻԿԻՆ կամենում է մասնաւոր տներում ՖՐԱՆՍԻԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ լեզուի դասեր տալ։ Հասցէի մասին կարելի է տեղեկանալ «ՄՇԱԿԻ» խմբագրատան մէջ։

ДАМА француженка желаетъ имѣть въ частныхъ домахъ уроки *французскаго и англійскаго* языковъ. Спроситъ объ адресѣ въ редакціи газеты «*Мшакъ*.»

9—10

Тифлисская Городская Управа доводитъ до всеобщаго свѣдѣнія, что Городская Дума въ засѣданіи, 9 мая сего 1877 года, опредѣлила: Установить сроки для взноса оцѣночнаго сбора, считая вмѣстѣ съ тѣмъ и льготные 15 дней, 1 февраля и 1-го августа; съ неисправныхъ же платильщиковъ взыскиватъ пеню въ размѣрѣ 1% въ мѣсяцъ, исчисляя таковую съ 1-го февраля за неплатежъ первой половины оцѣночнаго сбора и съ 1 августа за невзносъ второй половины этого сбора.

2 (3)

Կառավարութեան թոյլտուութիւն ստացած լինելով բանալ գրավաճառանոց Շուշի քաղաքում, պատիւ ունեմ խնդրել պ. պ. հեղինակներից և թարգմանիչներից ուղարկել ինձ իւրեանց աշխատութիւնները թեթև կամիսիոնական վարձատրութիւնով։ Ես ընդունում եմ վաճառելու ամեն տեսակ աշխատութիւններ. իմ հասցէն՝

Въ каммисіорнерный книжный магазинъ Мугдеси Акоповъ, въ Шушу.

1—2

Շուտով կը տպագրվի «ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ» լիակատար երգարանի չորրորդ հատորը։ Որովհետև բաժանորդագրաց անունները տպագրվելուն դրքի վերջում, այս առիթով ցանկացողներին հրավիրում եմ վաղօրօք բաժանորդագրուիլ՝ կամ իմ ծանօթ բարեկամների մօտ, որոնք գտնվում են մի քանի քաղաքներում, կանխիկ վճարելով իւրաքանչիւր օրինակի համար մի ռուբլ, կամ ուղղակի դառնալով դէպի ինձ այս հասցէով՝ Аваку Лазаревичу Григорьеву, въ Баку.

Գիրքը բաղկացած է բարոյական և պատմական բանաստեղծութիւններից, Աղգային, Տեղական, Ժողովրդական և Հոգևոր երգերից, Առածներից և Հանելուկներից։ Այս հատորի մէջ կը տպագրվին Նոյնպէս Զարկեարի (Աբրահամ Մարտիրոսեանի) և նորա սիրած Մայիֆի երգերից ևս։

Խմբագիր-Հրատարակիչ Ա. Գրիգորեանց։

2 (3)

ԾԱԽՎՈՒՄ Է

ԿԻՐ հանգցրած և չը հանգցրած, եաշչիկներով և սաժէնով։ Պայմանների մասին դիմել Վ. Լ. ՊԱՏԿՕՎԻ և ընկ. սպիրտի պահեստը, որը գտնվում է Կուկիայում, Նիկոլաէվսկի փողոցում № 44.

8 (8)

ЗАМѢЧЕННОЕ СРЕДСТВО ПРЕСКОВАТО ЯКИРА
SIROP DE RAIFORT IODE
GRIMAULT ET Cie

ГЛИКОНИНОВОЕ МЫЛО СИШЕЛЬ
8, RUE VIVIENNE, 8
PARIS
Большая медаль за заслуги
На всемірной выставкѣ въ Вѣнѣ.

Мыла, носящія названіе глицериновыхъ, вообще несодержатъ въ себѣ ни малѣйшаго слѣда этого вещества, и единственно въ гликониновомъ мылѣ Сишель можно найти это основаніе.
Г. Сишель привилегированный способомъ достигъ соединенія глицерины съ явнымъ желткомъ, изъ чего приготовленное мыло придаетъ кожѣ бѣлизну, бархатистую нѣжность и эластичность, всѣдствіе чего оно превосходитъ всѣ до сихъ поръ изобрѣтенныя мыла.
Это чрезвычайно душистое мыло, вошло во всеобщее употребленіе въ элегантномъ свѣтѣ, и вслѣдствіе своихъ несравненныхъ гигіеническихъ свойствъ рекомендуемо всѣми парижскими врачами.

ВІРЫСКИВАНІЕ ИЗЪ МАТИКО
АПТЕКАРЯ ГРИМО и К°. ВЪ ПАРИЖѢ
Вспрыскиваніе это, приготовленное посредствомъ перегонки листьевъ перуанскаго дерева МАТИКО, употребляется по предписанію врачей противъ гонорея.
Дѣло во всѣхъ главныхъ аптекахъ Россіи. — Избѣгать поддѣлокъ.
ВЪ ТИФЛИСѢ У ЦУРИНОВА

ՅՈՒՆԻՍԻ 13. ՏԵՂԵԿԱՑՈՅՑ ԹԻՖԼԻՍ. 1877.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ
(Յունիսի 13-ին)

	Ռ.	Կ.
Ոսկին (պոլումպերիալը)	7	55
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1250	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1090	—
Վիգրինի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	208	—
Երկրորդ 5% վիգրինի »	200	—
Մարսելի կուրսը 268 ֆր.	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	9	40
Վենայի կուրսը ածէ 136 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը.	5	—
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	280	—
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու	7	80
» միւս տեսակը	7	50
» չաքարաւազը	7	30
» տրանզիտը	7	60
» մաքսը վճարած	10	50
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից	6	80
Միւս տեսակը հին սերմից	5	75
Բուրդը թուչի	5	—
» թարաքամի	3	—
Աւլիւր Շորագալու	1	40
» Երևանի	1	10
Գարին	—	65
Մոմը բնաճարպի (стеар.)	12	—
Մետաքս Նուխվայ	—	—
Կախեթուները	50	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	25	—
Ֆրիզոնը (լասը) Ադուլեաց	30	—
Կոֆէն մօկօի	27	—
» լիվանի	22	—
» մարտինկօյինը	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ռ.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները	1	
Նոր-Նախիջևան, Աստրախան, Ղրիմ, Մայրաքաղաքներ և Եւրոպական Ռուսաստան	2	
Աւստրիա	3	
Անգլիա	4	
Գերմանիա	2	88
Թիւրքիա	3	25
Ֆրանսիա	3	75

ՆԱՒԵՐ (Շրջական գիծ)

Օդեսայից Փոթի (ամառը) հինգշաբթի ժամը 3-ին կէս օրից յետոյ։
Փոթիից Օդեսա երկուշաբթի 8 ժամին առաւօտեան։
Օդեսայից Փոթի (ձմեռը) հինգշաբթի 3 ժամին։
Փոթիից Օդեսա հինգշաբթի առաւօտեան։
Փոթիից Կ. Պոլիս կիրակի առաւօտները։
Կ. Պոլսից Փոթի կիրակի առաւօտները։

(Ուղղակի գիծ)

Օդեսայից Փոթի երկուշաբթի 3 ժամ. կէսօրին։
Փոթիից Օդեսա շաբաթ 8 ժամ. առաւօտ։

ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 36 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովո (խառն գնացքը) երեկոյեան 4 ժամ. 54 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից	9. 36	4. 54
Գորի.	12. 32	9. 11
Միխայլովո	2. 15	11. 25
Ռութայիս	8. 33	
Փոթի.	11. 46	

	առաւօտ.
Փոթիից	8. 38
Ռութայիս	11. 59
Միխայլովո.	5. 56
Գորի.	7. 33
Թիֆլիս.	10. 16

	1.	2.
Թիֆլիս.	1. 06	7. 24

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 10 ժ. 16 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 24 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ	90	68	38
Գորի	3. 20	2. 40	1. 33
Սուրամ	5. 22	3. 92	2. 18
Ռութայիս	9.	6. 75	3. 75
Փոթի	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

1) Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ՝ Ռուսաստան և արտասահման ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 12 (բացի կիրակի օրերից)

2) Բագուի ճանապարհը՝ թեթև փոստը ընդունվում է երեքշաբթի և ուրբաթ օրերը, իսկ ծանր փոստը երկուշաբթի։

3) Երևանի տրակտը՝ ամեն օր։

4) Փոթի-Թիֆլիսեան երկաթուղու գիծը՝ ամեն օր, բացի կիրակի օրերից։

5) Նուխու տրակտը՝ թեթև փոստը ընդունվում է չորեքշաբթի, իսկ ծանր փոստը շաբաթ օրերը։

6) Բէլիկլիչի ճանապարհը՝ ամեն տեսակ փոստ ընդունվում է երկուշաբթի և ուրբաթ օրերը։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բէլիկլիչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակը ածէ	4
Ռուսաստան նամակը	8
Գերմանիա, Աւստրիա	8
Ֆրանսիա	8
Անգլիա	8
Շվէյցարիա	8
Թուրքիա (կ. Պոլիս)	8
Թիւրքիա (ցամաք)	8
Իտալիա	8
Ամերիկա	28
Պարսկաստան	10
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ՓՕՍՏԻ ԿԱՌՔԵՐ

Թիֆլիսից Վլադիկավկաս փոստի կարգերը գընում են ամեն օր, երկու անդամ օրը։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

— ԴԷՐԲԷՆԴ. Ա. Ռ. Տ. Ղ. Ուղարկեցինք։

— ԱԳՈՒԼԻՍ. Կարդացողներին, Շատ ցաւում ենք որ «Մշակի» երկու համարներն էլ միասին էք ստանում, բայց մենք մեզաւոր չենք այդ բանում։ Մենք ճիշդ ենք ուղարկում մեր թերթը նորա երևալից յետոյ հետևեալ օրը։

— ԹԻՖԼԻՍ. Օ. Կ. Բ. Ձեր յօդուածը կը տպենք միւս համարում և կը ստորագրենք այնպէս, ինչպէս առաջ էին ստորագրված ձեր յօդուածները։

— ԱԽԱԼՔԱԼԱՔ. Բ. Պ. Մասնաւոր նամակով կը բացատրենք ձեզ ինչի ձեր ուղարկած լուրերը չեն տպվում։

— ԹԷԼԱՒ. Պ. Դեռ չը գիտենք՝ կը կարողանանք տպել ձեր յօդուածը, թէ ոչ։

— ԱԽԱԼՔԱԼԱՔ. Կ. Տ. Մ. Ստացանք ձեր բաց նամակը։ Բ. Պ.-ին նամակ ենք գրելու այս օրերս։ Նրանից հարցրէք։

Дозволено цензурою 11 Іюня 1877 г. Тифлисъ. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ